ՀՖՖ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 2
ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
Հոդված 1. Կանոնակարգի առարկան և գործողությունների շրջանակները 4
Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները 4
Հոդված 3. Մրցումների ղեկավարումը 5
Հոդված 4. Մրցումների բարեվարքային համակարգը 5
ԳԼՈՒԽ 2. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ 6
Հոդված 4. Մրցումների մասնակից թիմերը 6
Հոդված 5. Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը և ժամկետները 6
Հոդված 6. Խաղերի անցկացման կարգն ու ձևաչափը 8
Հոդված 7. Թիմերի պատասխանատվությունը 10
Հոդված 8. Չկայացած և անավարտ խաղեր 10
Հոդված 9. Թիմերի չներկայանալը խաղին կամ առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը, վիճարկելը 11
ԳԼՈՒԽ 3: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԹԻՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12
Հոդված 10. Դաշտի տեր թիմի պարտականությունները 12
ԳԼՈՒԽ 4. ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 12
Հոդված 11. Խաղերի կազմակերպումը և սպասարկումը 12
ԳԼՈՒԽ 5. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 13
Հոդված 12. Ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին և փոխարինումը 13
Հոդված 13. Մրցումների մասնակիցների հայտավորումը 14
ԳԼՈՒԽ 7: ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ 15
Հոդված 14. Լավագույնների որոշման կարգը և պարգևատրումները 15

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Կանոնակարգում օգտագործված հասկացությունների սահմանումները

1. **ՀՖՖ-** «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն:
2. **ՖԻՖԱ**- Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
3. **ՈՒԵՖԱ-** Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
4. **ԻՖԱԲ-** Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ
5. **Արտակարգ իրավիճակ/ ֆորս-մաժոր-** Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը
6. **Առաջնություն-** Տվյալ մրցաշրջանի դպրոցական թիմերի միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն
7. **Թիմի անձնակազմ-** Դպրոցի աշխատակիցներ, այդ թվում՝ ուսուցիչներ, բուժաշխատողներ և ղեկավար անձնակազմի անդամներ, որոնք հայտավորված են ՀՖՖ Ֆուտբոլի դպրոցական մրցումներին մասնակցելու նպատակով
8. **Խաղացանկ-** Խաղային օրերի ժամանակացույց
9. **Խաղի ժամանակահատված** - Խաղասկզբից 1 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղավարտից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված
10. **Խաղի կանոններ-** «Ֆուտբոլ խաղի» գործող կանոններ ըստ ԻՖԱԲ-ի
11. **Կանոնակարգ-** 2025թ. ՀՖՖ ֆուտբոլի դպրոցական մրցումների անցկացման կանոնակարգ
12. **Հանդիպման/խաղի կազմակերպիչ**- Դաշտի տեր թիմ/դպրոց, որն ապահովում է ֆուտբոլային հանդիպման կազմակերպման և անցկացման աշխատանքները
13. **Հանդիպման/խաղի մասնակից** – Ֆուտբոլիստ/աշակերտ, դպրոցի կողմից ներկայացված պաշտոնյա/մարզիչ, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար

14. **Հայտավորված ֆուտբոլիստ**- ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում գրանցված ՀՖՖ մանկապատանեկան մրցումներին մասնակցող որևէ թիմի կազմում հայտավորված ֆուտբոլիստ
15. **Հյուր թիմ**- Հակառակորդի՝ հանդիպման կազմակերպչի դաշտում խաղին մասնակցող թիմ
16. **ՀՖՖ մրցավարական և տեսչական բաժին**- Հանդիպման մրցավարներին նշանակող մարմին
17. **ՀՖՖ մասսայական և սիրողական ֆուտբոլի բաժին**- Մրցումները կազմակերպող և անցկացնող մարմին
18. **Մարզերում ՀՖՖ ներկայացուցիչներ**- ՀՀ յուրաքանչյուր մարզում ՀՖՖ կողմից նշանակված և ՀՖՖ անունից գործող անձինք
19. **Մրցումներ** - ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր
20. **Մրցավար**- Խաղի՝ ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար
21. **Մրցաշրջան** - Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով սկսվող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակահատված

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կանոնակարգի առարկան և գործողությունների շրջանակները

1. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլի դպրոցական մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է դպրոցական ֆուտբոլի մրցումներին մասնակցող թիմերի իրավունքներն ու պարտականությունները:
2. Սույն կանոնակարգը վերաբերում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող դպրոցական ֆուտբոլի բոլոր մրցումներին՝ Մ14, Մ12 և Մ10:
3. Կանոնակարգի խնդիրներն են՝

   ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը:
   բ) Մրցումների մասնակիցների համար լիարժեք պայմանների ստեղծումը և ապահովումը:
   գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

ա) ՀՀ տարածքում դպրոցական ֆուտբոլի հետագա զարգացմանն ու մասսայականացմանը նպաստելը:

բ) Վաղ տարիքից դպրոցներում ֆուտբոլ առարկայի մասսայականացմանը և ուսուցման պրոցեսի մակարդակի հետագա բարձրացմանը նպաստելը:

գ) Հեռանկարային, խոստումնալից և տաղանդավոր ֆուտբոլիստներին ի հայտ բերելուն նպաստելը:

դ) Պրոֆեսիոնալ ակումբներում ֆուտբոլիստների համալրման համար հերթափոխի պատրաստման գործընթացին նպաստելը:

ե) Ֆուտբոլի միջոցով առողջ ապրելակերպի գաղափարի տարածմանը նպաստելը:

զ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը:

է) Տարբեր տարիքային խմբերի մրցանակակիրներին ի հայտ բերելը:

ը) Այլ մրցանակակիրներին ի հայտ բերելը:

թ) Մասնակցության թվաքանակների ամփոփումը և ներկայացումը:

Հոդված 3. Մրցումների ղեկավարումը

Մրցումների ընդհանուր կազմակերպումն ու վերահսկումն իրականացվում է ՀՖՖ կողմից: Մրցումների ղեկավարումն ու հսկողությունը մարզերում իրականացնում են ՀՖՖ-ն և մարզերում ՀՖՖ ներկայացուցիչները, Երևանում՝ ՀՖՖ-ն և Երևանի վարչական շրջանների սպորտի պատասխանատուները,

ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

- հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգն ու խաղացանկերը,
- հաստատում է դպրոցական թիմերի հայտավորումները,
- իրականացնում է վիճակահանությունները,
- հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների կազմը,
- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ վերահսկողությունը,
- ամփոփում և հաստատում է առաջնությունների արդյունքները,
- իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումները:
- իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:

Հոդված 4. Մրցումների բարեվարքային համակարգը

Մրցումների բարեվարքային համակարգն ապահովելու նպատակով արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող դպրոցական ֆուտբոլի մրցումներին մասնակից դպրոցական թիմերի և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը, հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողություն կատարելը կամ այդ արարքների մասին իմանալը և ՀՖՖ-ին չհայտնելը:

ԳԼՈՒԽ 2. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 4. Մրցումների մասնակից թիմերը

1. Մրցումներին կարող են մասնակցել այն դպրոցների թիմերը, որոնք ընդունում են ՀՖՖ Կանոնադրությունը և պարտավորվում են կատարել դրա, ինչպես նաև սույն Կանոնակարգի պահանջները:
2. ՀՖՖ ֆուտբոլի դպրոցական մրցումներին դպրոցական թիմերի կազմում չի թույլատրվում հայտավորել նախորդ 3 մրցաշրջաններում ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի մրցումներին հայտավորված ֆուտբոլիստներին:
3. Մարզերի դպրոցները հաստատում են իրենց թիմի մասնակցությունը մրցումներին՝ մինչև **2025թ. սեպտեմբերի 25-ը** ՀՖՖ կողմից նախապես տրամադրված օնլայն հղմամբ ներկայացնելով սահմանված կարգի Հայտի թերթիկը և Տեղեկանքը /հավելված 1 և հավելված 2/:
4. Երևանի դպրոցները հաստատում են իրենց թիմի մասնակցությունը մրցումներին՝ մինչև **2025թ. սեպտեմբերի 25-ը** ՀՖՖ կողմից նախապես տրամադրված օնլայն հղմամբ ներկայացնելով սահմանված կարգի Հայտի թերթիկը և Տեղեկանքը /հավելված 1 և հավելված 2/:
5. Առաջնություններին մասնակցելու համար մուտքավճար չի պահանջվում:
6. Մեկ դպրոցը կարող է մրցումներին մասնակցել 1-ից ավելի թիմով, եթե երեխաների տարիքը համապատասխանում է:

Հոդված 5. Մրցումների տարիքային խմբերը, անցկացման կարգը և ժամկետները

1. Մրցումներն անցկացվում են հետևյալ տարիքային խմբերով՝
   - **Մինչև 14 տարեկան տղաների առաջնություն (2011-2012-2013 թթ.ծնվ.)**
   - **Մինչև 12 տարեկան տղաների և աղջիկների առաջնություն (2013-2014-2015 թթ.ծնվ.)**
   - **Մինչև 10 տարեկան տղաների և աղջիկների առաջնություն (2015-2016-2017 թթ. ծնվ.)**

1. **Մ14** տարեկանների առաջնությանը թույլատրվում է հայտավորել 2011-2012 թթ. ծնված տղաների, ինչպես նաև 2013թ. ծնված առավելագույնը 3 տղաների: Մ14 խմբում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 12 տղա ֆուտբոլիստ (աշակերտ):

Մ12 տարեկանների առաջնությանը թույլատրվում է հայտավորել 2013-2014 թթ. ծնված տղաների և աղջիկների, ինչպես նաև 2015 թ. ծնված առավելագույնը 3 տղաների և աղջիկների: Մ12 խմբերում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 12 ֆուտբոլիստ (աշակերտ)՝ 9 տղա և առնվազն 3 աղջիկ:
Մ10 տարեկանների առաջնությանը թույլատրվում է հայտավորել 2015-2016 թթ. ծնված տղաների և աղջիկների, ինչպես նաև 2017 թ. ծնված առավելագույնը 3 տղաների և աղջիկների: Մ10 խմբերում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 12 ֆուտբոլիստ (աշակերտ)՝ 9 տղա և առնվազն 3 աղջիկ:

2. **Մ14** մրցումներն անցկացվում են 3 փուլով՝ միջհամայնքային, մարզային/երևանյան և հանրապետական:
   - 1-ին՝ **միջհամայնքային** փուլին մասնակցում են երևանյան և մարզային հանրակրթական դպրոցների թիմերը:
   - 2-րդ՝ **մարզային/երևանյան** փուլին մասնակցում են միջհամայնքային փուլում հաղթած թիմերը՝ որոշելով մարզի և Երևանի Մ14 խմբի հաղթողներին:
   - 3-րդ՝ **հանրապետական** փուլին մասնակցում են Մ14 խմբի մարզային և երևանյան փուլում առաջին տեղ գրաված թիմերը:
3. **Մ12** և **Մ10** մրցումներն անցկացվում են 2 փուլով՝ միջհամայնքային, մարզային/երևանյան:
   - 1-ին՝ **միջհամայնքային** փուլին մասնակցում են երևանյան և մարզային հանրակրթական դպրոցների թիմերը:
   - 2-րդ՝ **մարզային/երևանյան** փուլին մասնակցում են միջհամայնքային փուլում հաղթած թիմերը՝ որոշելով մարզի և Երևանի Մ12 և Մ10 խմբերի հաղթողներին:
4. Թիմերի համազգեստները ապահովում է տվյալ դպրոցը կամ համայնքը: Համազգեստի բացակայության դեպքում թիմերին կթույլատրվի մասնակցել միագույն ժիլետներով:
5. Միջհամայնքային փուլի տրանսպորտային ծախսերը կիրականացնեն դպրոցները/համայնքները: Մարզային փուլի տրանսպորտային ծախսերը կիրականացնեն համայնքները կամ մարզպետարանները, միայն խիստ անհնարինության դեպքում այդ ծախսերը կիրականացնի ՀՖՖ-ն: Հանրապետական փուլի տրանսպորտային ծախսերը կիրականացնի ՀՖՖ-ն:
6. Մրցաշարի բոլոր փուլերն անցկացվում են օլիմպիական մրցակարգով՝ 1 խաղով: Ամեն փուլից առաջ մրցակիցները որոշվում են վիճակահանությամբ:

7. Միջհամայնքային և մարզային/երևանյան փուլերն անցկանցկացվում են յուրաքանչյուր մարզում և Երևանում, հանրապետական փուլի խաղերի անցկացման վայրը կընտրի ՀՖՖ-ն:
8. Մարզերի՝ միջհամայնքային և մարզային փուլերի անցկացման վայրերը կընտրեն մարզերում ՀՖՖ ներկայացուցիչները՝ հաշվի առնելով աշխարհագրական առավել հարմար դիրքը և առկա ենթակառուցվածքները:
9. Երևանի՝ համայնքային և երևանյան փուլերի անցկացման վայրերը կընտրեն Երևանի վարչական շրջանների սպորտի պատասխանատուները՝ հաշվի առնելով աշխարհագրական առավել հարմար դիրքը և առկա ենթակառուցվածքները:
10. **Մ14** տարիքային խմբի մրցումների անցկացման ժամկետներ են՝
    - **Միջհամայնքային փուլ՝ 06.10.2025թ. – 31.10.2025թ.**
    - **Մարզային/երևանյան փուլ՝ 01.11.2025թ.- 20.11.2025թ.**
    - **Հանրապետական փուլ՝ 20.11.2025թ.- 10.12.2025թ.**
11. **Մ12** և **Մ10** տարիքային խմբերի մրցումների անցկացման ժամկետներ են՝
    - **Միջհամայնքային փուլ՝ 06.10.2025թ. – 31.10.2025թ.**
    - **Մարզային/երևանյան փուլ՝ 01.11.2025թ.- 30.11.2025թ.**

Հոդված 6. Խաղերի անցկացման կարգն ու ձևաչափը

1. Սույն կանոնակարգով սահմանված դպրոցական մրցումների շրջանակներում խաղերը կազմակերպվում և անցկացվում են՝ համաձայն գործող ԻՖԱԲ խաղի կանոնների, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:
2. Սույն կանոնակարգով սահմանված ֆուտբոլի դպրոցական մրցումների հանդիպումներն անցկացվում են հետևյալ կերպ՝
    - **Մինչև 14 տարեկանների խումբ՝** հանդիպումը բաղկացած է 20 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և մինչև 10 րոպե ընդմիջումից՝խաղակեսերի միջև ընկած ժամանակահատվածում: Խաղի ձևաչափը՝ 6v6 (5+1): Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /35-40մ/, լայնություն՝ /20-30մ/, դարպասի չափսեր՝ լայնություն՝ /5մ./ բարձրություն՝ /2մ./, տուգանային հրապարակը՝ 7մ: 11 մետրանոց նշակետը փոխարինել 9 մետրանոց նշակետով:
    - **Մինչև 12 տարեկանների խումբ՝** հանդիպումը բաղկացած է 15 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և մինչև 10 րոպե ընդմիջումից՝ խաղակեսերի միջև ընկած ժամանակահատվածում: Խաղի ձևաչափը՝ 6v6 (5+1):

Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /35-40մ/, լայնություն՝ /20-30մ/, դարպասի չափսեր՝ լայնություն՝ /5մ./ բարձրություն՝ /2մ./, տուգանային հրապարակը՝ 7մ: 11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով:

- **Մինչև 10 տարեկանների խումբ՝** հանդիպումը բաղկացած է 15 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և մինչև 10 րոպե ընդմիջումից՝ խաղակեսերի միջև ընկած ժամանակահատվածում: Խաղի ձևաչափը՝ 6v6 (5+1): Խաղադաշտի չափսերը՝ երկարություն՝ /35-40մ/, լայնություն՝ /20-30մ/, դարպասի չափսեր՝ լայնություն՝ /5մ./ բարձրություն՝ /2մ./, տուգանային հրապարակը՝ 7մ:



2. Երեք տարիքային խմբի խաղերի ժամանակ թույլատրվում է կատարել հետադարձ փոխարինում:
3. Մ10 և Մ12 տարիքային խմբի խաղերի ժամանակ դարպասապահին թույլատրվում է որսալ գնդակը թիմակցի կողմից կատարված ոտքով փոխանցումից հետո:
4. Մ14 տարիքային խմբի խաղերի ժամանակ դարպասապահին չի թույլատրվում գնդակը ձեռքով որսալ թիմակցի կողմից կատարված ոտքով փոխանցումից հետո՝ համաձայն գործող ԻՖԱԲ խաղի կանոնների:
5. Երեք տարիքային խմբի խաղերի ժամանակ դարպասապահին չի թույլատրվում ոտքով գնդակը մտցնել խաղի մեջ:
6. Երեք տարիքային խմբի խաղերի ժամանակ «խաղից դուրս» վիճակը չի գործում:
7. Երեք տարիքային խմբի խաղերի ժամանակ չի թույլատրվում թիմերի կազմում խաղերին ներգրավել նախորդ 3 մրցաշրջանների ընթացքում (2022/2023, 2023/2024 և 2024/2025) ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի մրցումներին հայտավորված ֆուտբոլիստներին:
8. Խաղերը ոչ-ոքի ավարտվելու դեպքում հաղթող թիմը որոշվում է Մ10 և Մ12 խմբում 7 մետրանոց հարվածաշարի միջոցով, իսկ Մ14 խմբում՝ 9 մետրանոց հարվածաշարի միջոցով՝ համաձայն գործող ԻՖԱԲ խաղի կանոնների:

9. Մ10 և Մ12 տարիքային խմբերի հանդիպումներն անցկացվում են N4 գնդակով, իսկ Մ14 տարիքային խմբինը՝ N5 գնդակով: Եթե առկա չէ N5 գնդակ, ապա թույլատրվում է խաղն անցկացնել N4 գնդակով:

Հոդված 7. Թիմերի պատասխանատվությունը

1. Թիմերը պատասխանատու են՝
   - Հայտում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության համար: Արձանագրությունում նշված լինելը համարվում է մասնակցություն խաղին:
   - Խաղի ժամանակահատվածում (թիմերի և պաշտոնյաների՝ մարզադաշտ ժամանման պահից սկսած) և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, նրանց ծնողների, պաշտոնյաների, վարչական անձնակազմի, ինչպես նաև հանդիսատեսի, թիմի երկրպագուների անօրեն, անթույլատրելի և անվայել գործողությունների համար:
   - Խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին միջամտելու համար:
   - ՀՖՖ-ին ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:

Հոդված 8. Չկայացած և անավարտ խաղեր

1. Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապատասխանաբար, չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներով՝

   ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,

   բ) ֆորս-մաժորային իրավիճակ,

   գ) թիմի կողմից խաղադաշտի լքում,

   դ) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

   ե)թիմի ֆուտբոլիստի, անձնակազմի անդամի, պաշտոնյայի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագծի,

   զ) հասարակական կարգի այնպիսի խախտում, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

   է) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, դրա ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

ը) այլ հանգամանքներ:

2. Եթե խաղը չի կայացել, ընդհատվել, կամ չի շարունակվել սույն հոդվածի ա և բ կետերի համաձայն, ապա այն խաղացվում կամ շարունակվում է մեկ այլ օր նույն մարզադաշտում խաղի ընդհատման րոպեին հաջորդող րոպեից: Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ խաղադաշտում:
3. Անավարտ խաղի խաղացված ժամանակահատվածի հաշիվը մնում է ուժի մեջ: Տվյալ խաղի շարունակությանը իրավունք ունեն մասնակցելու միայն խաղի արձանագրությունում նշված և խաղին մասնակցած ֆուտբոլիստները: Տվյալ խաղի անցկացման/շարունակման ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:
4. Մյուս դեպքերում խաղը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0-3 հաշվով, իսկ մրցակցին հաղթանակ՝ 3-0 հաշվով: Եթե մրցակցի առավելությունը հաշվի մեջ գերազանցում է 3 գնդակը, ապա խաղի հաշիվը մնում է ուժի մեջ: Եթե անվայել վարքագիծ է դրսևորվել երկու թիմերի կողմից, ապա խաղի արդյունքը չեղյալ է համարվում և երկու թիմերն էլ լքում են պայքարը: Գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում:

Հոդված 9. Թիմերի չներկայանալը խաղին կամ առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը, վիճարկելը

1. Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 1 ժամ առաջ:
2. Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե կազմակերպչին չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել առավելագույնը ոչ ավելի քան մեկ խաղակես, որի մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ խորհրդակցելով մարզում ՀՖՖ ներկայացուցչի կամ ՀՖՖ Մասսայական և սիրողական ֆուտբոլի բաժնի հետ:
3. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, ինչպես նաև մարզադաշտը խաղի համար ժամանակին չտրամադրելու կամ անպատրաստ տրամադրելու դեպքում, խաղը համարվում է չկայացած: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:
4. Դպրոցները կարող են վիճարկել գործող ԻՖԱԲ խաղի կանոնների կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա՝

համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի համապատասխան դրույթների:

ԳԼՈՒԽ 3: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԹԻՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 10. Դաշտի տեր թիմի պարտականությունները

1. Նախապատրաստել խաղադաշտը հանդիպման համար:
2. Հանդիպման անցկացման համար մրցավարին տրամադրել առնվազն երեք գնդակ:
3. Հյուր թիմին և մրցավարին տրամադրել հանդերձարան:
4. Խաղի ամբողջ ժամանակահատվածում դաշտի տեր թիմը պետք է ապահովի համայնքի կամ դպրոցի բուժաշխատողի ներկայությունը:
5. Արգել կողմնակի անձանց մուտքը խաղադաշտ և հանդերձարաններ:

ԳԼՈՒԽ 4. ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 11. Խաղերի կազմակերպումը և սպասարկումը

1. Խաղն անցկացնելու համար ՀՖՖ-ի մրցավարական բաժինը նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝
   - Մ14 խումբ՝ 1 մրցավար
   - Մ12 խումբ՝ 1 մրցավար
   - Մ10 խումբ՝ 1 մրցավար:
2. Յուրաքանչյուր խաղից առնվազն 30 րոպե առաջ հանդիպման մրցավարը անցկացնում է նախախաղային խորհրդակցություն մրցող թիմերի մարզիչների և այլ ներկա անձնակազմի մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում ճշտվում են խաղի անցկացման պայմաններն ու տրվում համապատասխան հրահանգները մասնակիցներին:
3. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ քան 30 րոպե առաջ խաղի մասնակիցների ցուցակը(հայտ) լրացված և ստորագրված հանձնել մրցավարին:
   - Հայտին կից ներկայացվում է հայտում նշված յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար տրված տեղեկանքը նկարով և դպրոցի կնիքով, ինչպես նաև

յուրաքանչյուր ֆուտբոլիստի քաղաքացիական անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը:

- Խաղի մասնակիցների ցուցակը/հայտը ստորագրող պաշտոնյան պատասխանատու է ցուցակում նշված անձանց հետ կապված խախտումների համար: Խաղին կարող են մասնակցել/այդ թվում նաև գտնվել տեխնիկական գոտում/միայն այն ֆուտբոլիստները և պաշտոնյաները, որոնք նշված են հայտում:

4. Խաղը չկայանալու կամ ուշ սկսելու որոշումը պատկանում է խաղի մրցավարին:
5. Մրցավարը խաղասկզբից առնվազն 5 րոպե առաջ պետք է ստուգի թիմերի մեկնարկային կազմերի ֆուտբոլիստների, ինչպես նաև խաղի ընթացքում փոխարինվող ֆուտբոլիստների ինքնությունը՝ թիմերի կողմից ներկայացված տեղեկանքների միջոցով:
6. Մարզերում ՀՖՖ ներկայացուցիչը պարտավոր է տվյալ խաղի արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ Մասսայական և սիրողական ֆուտբոլի բաժին՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը:
7. Երևանում՝ վարչական շրջանի սպորտի պատասխանատուն պարտավոր է տվյալ խաղի արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ Մասսայական և սիրողական ֆուտբոլի բաժին՝ խաղին հաջորդող աշխատանքային օրը:

ԳԼՈՒԽ 5. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Հոդված 12. Ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին և փոխարինումը

2. Ֆուտբոլիստները և պաշտոնյաները մրցումներին մասնակցում են քաղաքացիական անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճեններով:
3. Թիմերին թույլատրվում է հայտավորել 12 ֆուտբոլիստ (աշակերտ) և մեկ մարզիչ՝ /ֆիզկուլտուրայի ուսուցիչ/, /տես հավելված 1/:
4. Մ14 խմբում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 12 տղա ֆուտբոլիստ (աշակերտ) :
5. Մ12 և Մ10 խմբերում թույլատրվում է հայտավորել առավելագույնը 12 ֆուտբոլիստ (աշակերտ) ՝ 9 տղա և առնվազն 3 աղջիկ:
6. Մ12 և Մ10 խմբերում դաշտում պարտադիր պետք է խաղա առնվազն 1 աղջիկ:
7. Հանդիպումների արձանագրության մեջ լրացված բոլոր ֆուտբոլիստները ենթակա են պարտադիր փոխարինման:

ԳԼՈՒԽ 6: ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 13. Մրցումների մասնակիցների հայտավորումը

1. Հայտավորվել կամ /վերահայտավորվել/ կարող են այն ֆուտբոլիստները, որոնք գրանցված են թիմը ներկայացնող դպրոցում: Վերահայտավորումը թույլատրվում է կատարել 1-ից 2-րդ և 2-ից 3-րդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում:
2. Ֆուտբոլիստը իրավունք ունի հանդես գալ միայն այն դպրոցի թիմի կազմում, որտեղ նա գրանցված է:
3. Ֆուտբոլիստների հայտավորման համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված հայտավորման թերթիկը: Թիմի կազմում կարող են հայտավորվել այն ֆուտբոլիստները, որոնք վերջին 3 մրցաշրջաններիի ընթացքում (2022/2023, 2023/2024 և 2024/2025) չեն մասնակցել ՀՖՖ մանկապատանեկան մրցումներին՝ հայտավորված չեն եղել: Պարտադիր լրացման ենթակա են՝
   - թիմը ներկայացնող դպրոցի անունը. անունը պետք է համընկնի թերթիկի դրոշմակնիքի վրա նշված անվան հետ,
   - թիմի անունը,
   - հայտավորվող ֆուտբոլիստների ցուցակը,
   - թիմի մարզչի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ստորագրությունը, կնքված կազմակերպության կնիքով, հայտավորման ներկայացման ամսաթիվը,
   - դպրոցի տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը:
4. Խաղի օրը հայտերի հետ ներկայացվում են մասնակից ֆուտբոլիստների քաղաքացիական անձնագրերի/ծննդյան վկայականների պատճենները, դպրոցից տեղեկանք՝ փակցված 3x4 չափսի գունավոր լուսանկարով և հաստատած դպրոցի տնօրենի կողմից /կնիքը հաստատած լինի նկարի վրա/, /տես հավելված 2/:
5. Լրացված հայտերը անհրաժեշտ է ներբեռնել նախապես տրամադրված էլեկտրոնային գրանցման հարթակում հետևյալ հղմամբ կամ էլեկտրոնային եղանակով ուղարկել grassroots@ffa.am հասցեին **մինչև ս. թ. սեպտեմբերի 25-ը:**

ԳԼՈՒԽ 7: ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ

Հոդված 14. Լավագույնների որոշման կարգը և պարգևատրումները

1. Մրցաշարի հանրապետական փուլի Մ-14 խմբի 1-ին տեղը գրաված թիմը կպարգևատրվի ՀՖՖ գավաթով, մեդալներով և դիպլոմներով, մրցանակային տեղեր զբաղեցրած մյուս թիմերը կպարգևատրվեն դիպլոմներով:
2. Մրցաշարի մարզային և երևանյան փուլի Մ-12 և Մ10 խմբերիի 1-ին տեղերը գրաված թիմերը կպարգևատրվեն ՀՖՖ գավաթով, մեդալներով և դիպլոմներով, մրցանակային տեղեր զբաղեցրած մյուս թիմերը կպարգևատրվեն դիպլոմներով:
3. Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ որոշմամբ կարող են սահմանվել նաև այլ պարգևատրումներ:

/Հավելված 1/

Հ Ա Յ Տ

2025թ. ՀՖՖ ֆուտբոլի դպրոցական մրցումների անցկացման

Հանրակրթական դպրոցի համարը և անվանումը _____

_____

Թիմի անվանումը _____ Դպրոցի հեռախոսի համարը _____

N	Մասնակցի Ա. Ա. Հ	Ծննդյան օր, ամիս, տարի	Դաս-ն	Հեռախոս	Ծանոթություն
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					

Մարզիչ/ֆիզկուլտուրայի ուսուցիչ/

_____/_____

անուն ազգանուն հեռախոսը

Դպրոցի տնօրեն կ.տ.

_____/ _____

ստորագրություն անուն ազգանուն

<_____>_____2025թ.

/Հավելված 2/

ՏԵՂԵԿԱՆՔ

N ----------

<……>…….2025 թ.

Տրվում է _____ ծնվ._____ թ.

օր, ամիս, տարի

որ նա 2025 թ.-ին սովորում է _____

_____դասարանում

Դպրոցի տնօրեն /_____/

անուն ազգանուն

կ.տ